ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ԵՐԳ ԱՂՔԱՏԻՆ

Ո՛հ, աղքատիկ եմ ես այր,
Ամենեւին ամայի.
Այլ իմ սրտիս մխիթար
Անգամ մի գէթ ըղձայի։

Ի ծննդացս անդ ի տան
Էի մանուկ հեշտածին,
Այլ արդ նոքա թաղեալ կան,
Եւ ինձ դառինք են բաժին։

Ճոխին պարտէզք ծաղկեն հոյլ,
Եւ զհասկ դիտեմ ոսկեթուռ.
Այլ իմ շաւիղս է ամուլ,
Որ վիշտս եւեթ տայ տըխուր։

Սիրեմ ցաւովք լըռելեայն
Բերկրելոց կալ յերախան,
Որոց սըրտիւս ամենայն
Մաղթեմ աւուրս բարութեան։

Սակայն, ով Տէր, ոչ թափուր
Ի բնաւ թողեր զիս հեշտից,
Քաղցր ըսփոփանս ընդհանուր
Ցաշխարհ սփռեալ քո յերկնից։

Ահա յամէն գիւղօրէք
Ամբառնայ սուրբ քոյին տուն,
Եւ երգեհոն, սաղմոսերգք
Համայն զականջըս լընուն։

Ո՞չ այգ արփի եւ լուսին
Եւ ինձ ծագեն գըթասէր,
Եւ ի զանգակ գիշերին
Եւ ես խօսիմ ընդ քեզ, Տէր։

Բացցին երբեմըն բարեաց
Դուրք բարձր ի խինդ տաճարիդ,
Եւ ես ի զգեստ հարսանեաց
Առբազմեցայց սեղանիդ։

ՈՒՀԼԱՆՏ

ԾԱՂԿԱՔԱՂ ԵՒՐՈՊԱԿԱՆ

Եդիպոս 'ի Կիւթերոն։

Յետ ընդ երկար յածելոյ հասին Եդիպոս և դուստր նորա պարկեշտադէմ առ ոտս Կիւթերոնի։ Այս է Կիւթերոն լեառն զոր հատանէին երրեակ ուղիք. յորոց մին առեալ տանի մինչև 'ի բարգաւաճ այգեստանեայս Փովկիսայ, տակաւ 'ի վեր ամբարձեալ ցերկնակատար ամպահերձն Պառնասոս. միւսն հանէ 'ի քաղաքն Եփիւրացւոց, զոր ընդ մէջ կրկին ծովուց կառոյց առաքինին Սիսիւփոս, և երրորդն իջանէ 'ի սահմանածայրս Աւլիդեայ, և անտի ձգի տարածանի զափամբք զուարճադէղ և ծիծաղախիտ գետոյն Ալփէոսի։ Ընդ երկրորդ ճանապարհն գնային տարագրեալքն երկոքին, և հասեալ 'ի վայրն ուր բաժանին յայլոց, անդ զկայ առեալ դադարեցին։ Այս էր վայրն տեղի սպանմանն Լայոսի։ Ո՛հ, եղո՜ւկ ինձ, գոչեաց յայնժամ Եդիպոս, եղո՜ւկ ինձ. քանզի զայնչափ ժամանակ չէր ինձ փոյթ գիտել եթէ ո՞վ էր այրն այն անծանօթ զոր սպանի մոլեգնութեամբ։ Աւա՜ղ, զի 'ի դարձին իմում 'ի Դելփեայ, ուր երթեալ էի հարցանել ըզպատգամախօսն, ոչ կամելով գնալ 'ի Կորնթոս՝ զոր հայրենիս իմ լինել կարծէի, զիմեցեալ գնացի 'ի Թեբէ։ Դուստր իմ, և իցէ՞ ճանապարհս անձուկ և զառիթափ. իցե՞ն գահավէժք յաջմէ իմմէ և ժայռք ահարկու յահեկէս. զլորիցէ՞ աստանօր հեղեղատ զխառնվայրոյց ալիս 'ի խորս անդնդոց. ահա լսեմ զկարկաչ նորա, լսեմ և զխոխոջել աղբերն, որ երբեմն նուիրական էր Մուսայից և արդ սիրելի Եւմենեայց։ Դուստր իմ, տար զիս ընդ կրկին կաղնեօք որք զասպնջական հովանիս արկանեն 'ի վերայ Լայոսայ. թո՛ղ ինձ տեսանել զնոսին։ Երկինք առ հասարակ հրաբորբոք էին յաւուրն յայնմիկ, կողերք կաղնեացդ այդոցիկ թեքեալ խոնարհէին 'ի բուռն մրրկէ, հեղեղն ար-

ձակեր շառաչիւնս հանգոյն խռովայոյզ մռնչմանց բիւրուց անկելոց, զյետին մռնչելով հեծեծութիւնս 'ի դաշտն Արիսի: Ընդէ՞ր ոչ ունկն մատուցի ձախողակի գուշակութեանց. զիա՞րդ աներկիւղ կացեալ տեսի առ ոտս իմ զերագաթռիչ արքայն օդոց, զարծուի, շանթահար տապալեալ: Ընդէ՞ր ոչ հաւատս ընծայեցի կանուխ ազդմանցն յիս առ 'ի դից: Ո՜վ արփի, իցիւ հասեալ էր ինձ զուրկ 'ի պարգևաց քոց լինել, կոյր և 'ի ժամանակին յայնմիկ, որպէս եմս այժմիկ,,:

Անտիգոնեայ զգողանի հարեալ ընդ բանս Եդիպոսի փութացաւ պատասխանի առնել բանիցն նորա. "Այո՛, հայր իմ, է աստանօր հեղեղ որ թաւալէ 'ի խորս անդնդոց զխռովայոյզ կոհակսն. գահավիժք կան յաջմէ քումմէ և ժայռ ահարկու 'ի ձախմէ, և ահա մերձ եմք երկուց կաղնեացն հովանացելոց 'ի վերայ աղբեր միոյ արծաթափայլ ծորելոյ. զառիթափ է ճանապարհս, և բացուստ նշմարին պատուարք Թեբէի: — Ո՛հ, դուստր իմ, տեսանե՞ս դու զքաղաքն Կադմոսի. տեսանէի զայն և ես, և բնաւ իսկ կարծէի ոչ դնել 'ի գլուխ իմ զմահաբեր թագ նորին: Այլ զկայ առցուք աստանօր, աստ է, այո՛ աստէն, ասա՛ ինձ, ո՞չ աստ բազմեալ կայցէ ըստուեր Լայոսի 'ի քարաժայռս: — Ոչ, յաւել Անտիգոնէ, չտեսանեմ ես զըստուեր Լայոսի բազմեալ 'ի ժայռս: — Ա՛հ, տեսանեմ ես զնա, կրկնեաց անդրէն Եդիպոս, ահաւանիկ է մեծ և ահաւոր. ահա վէրք նորա բերանալից և հոսանք արեանն որ յորդեն անտի. խոյս տան թիկնապահք նորա, 'ինքն դիաթաւալ անկեալ կայ 'ի կառսն. ձեռքն կթուցեալք լքանեն զերասանակս. ձայն իմն որ կիսահագագ հնչէ 'ի լանջսն, անկարացեալ յօդել բարբառ մի և եթ յերկիթայեալ շրթունսն . . . . ո՜վ դիք, ծանեաւ զորդին. դէմք վեհափառ, ընդէ՞ր փայլակնացայտ տիգօք աչաց խաղայք յիմ վերայ: Խռովլին խորհուրդք իմ համօրէն: Ո՜վ ստուեր պատկառելի, եթէ ցարդ ոչ յագեցաւ ցասումն քո վրէժխնդիր խռովալից կենօքս, և ոչ լրումն էառ յանչափ առաւելութենէ թշուառութեանցս և աղետից, գոնեա այժմեանս ցաւ սրտիս լցուսցէ զթերին: Հայեաց աղէ գամ մի 'ի դուստրն իմ. անմեղ է նա և հայցէ 'ի քէն վասն իմ թողութիւն: Սիրելիդ իմ Անտիգոնէ, փարեաց զինև, դուստր իմ, եկ 'ի գիրկս իմ. ահա ես 'ի քեզ եմ ապաստան, պաշտպանեա հօր քում: Ա՛հ, պաղատանս վասն իմ մատուսցես երկնից. աղաչեա զմեծն Արամազդ. աղաչեա զՄուսայս զփոփիխչան մահկանացուաց: Եւ դուք ահաւոր Եւմենեայք, թողէք զիս, ոչ է ձեզ տուեալ իշխանութիւն 'ի վերայ քաղցր և պարկեշտագեղ առաքինութեան. Անտիգոնէ զիրկընդխառնի ընդ իս: Թանայ արտասուօք զլանջս իմ. շրթունք նորա համբուրեն 'ի ճակատուս զտարաժամ սպիտակացեալ զիմ ալիս,,:

Այսօրինակ բարբառէր Եդիպոս, իսկ Անտիգոնէ քաղցր բանիւք սփոփէր զհայրն. այլ 'ի պատկեր մահուն զոր յանդիման աչացն նկատէր, խաղաղեցան տագնապք սրտի նորա և խանդաղատանօք բարբառէր. "Դուստր իմ, տեսանես զիս պատարագ պատրաստեալ 'ի սպանդ, հասեալ է ժամն իմ յետին. և թէպէտ ոչ գիտեմ եթէ զիա՞րդ հաճոյ թուեսցի դիցն զարդարութեան իւրեանց վերջին ցուցանել յիս դրօշմն, բայց ահա վարիմ ես 'ի մահ: Դուստր իմ, ա՛ռ 'ի ճակատէս գիսակս ինչ հերաց, և դիցես զայնս 'ի վերայ շիրմի եղկելի մօր քո. կաթամբ և մեղու տուր քաւութիւն 'ի վերայ ամայի գերեզմանին, որ եկաց մնաց ցարդ անփառունակ: Ո՛հ, չեկաց ոք երբէք թագուհի և հարսն և մայր՝ որ այսպէս անշուք և գաղտագողի իմն ընկեցեալ իցէ 'ի ծոց երկրի: Դուստր իմ, ոչ մի ինչ խոչ կարասցէ արգելուլ զքեզ 'ի բարեպաշտօն պարտուց յայսցանէ. զամենայն սրբեսցէ մահ,,:

Յետ ընդ երկար լռութեան յաւել դարձեալ Եդիպոս. "Ընդ հուպ մեռայց ես. 'ի սմին աստ պահու զգամ միահաղոյն զզօրութիւն կենաց և զմահու. չունին կեանք այլ ևս ուսուցանել ինձ.

և ահա տակաւ հրահանգէ զիս ։ Ո՛վ լոյս տուընջեան, ոչ ևս շողշողես յաչս իմ ։ Բայց այլ լոյս փայլէ 'ի միտս իմ ։ Երջանիկդ օթևան, բա՛ց զդրունս քո և ընկալ զնա որ երկիցս կոչեցաւ 'ի գերագահ աւագութիւն. և արքունին վարսակալ 'ի ճահ էր ճակատուն. ընկալ զայրն՝ որ զփորձ էառ ամենայն թշուառութեանց ։ Եւ դու, Անտիգոնէ, արիասիրտ դուստր և մեծանձն, մաղթեա վերստին զգթութիւն դիցն անմահից. տացեն երկինք զի այս վերջին գութք սրտիս և վերջին խորհուրդք՝ հանգուցեալ 'ի վերայ քո սրբանուէր զքեզ գործիցեն ։ Բայց զայս ևս հարկ սպասումատուցես ինձ, որդեակ. մինչ ես առ աղբերս այսու սրբեցայց, երթ խնդրել ինձ ոչխար սևագեղմն, զի յաշտ արարից դիցն սանդարամետականաց „ ։

Անտիգոնէ թեթևագոյն ոտիւք քան զայծեամն սլանայ անդէն 'ի հովիտն, խնդրել 'ի հովուէ ումեմնէ զպատարագն՝ զոր խնդրեաց 'ի նմանէ հայր նորա ։ "Արդ տեղի տուր աստի „, ասէ ցնա Եդիպոս ։ Անկանի առ ոտս նորա Անտիգոնէ ։ Կրկնեաց անդրէն հայրն և ասէ. "Ո՛վ դուստր իմ, ոչ է մեզ ընդդէմ կալ դիցն կամաց ։ Աւա՜ղ, թողում ըզքեզ մենաւոր 'ի կենցաղումս. չկարեմ ապաստան առնել զքեզ ոչ 'ի խուժադուժ եղբարս քո, ոչ յապիկարն Իսմենէ, ոչ 'ի Կրէոն զոր փառասիրութիւն զանխուլ բորբոքէ, և ոչ իսկ յորդի նորին առատամիտ ։ Բայց երթիջիր, Անտիգոնէ, 'ի խնդիր Թեսէոսի ։ Դիւցազնն Աթենայ վիճակեցաւ 'ի դից պաշտպանել զբարի բարի խորհուրդս զոր տակաւին ածցես զմտաւ. յիշեսցէ նա զբարեկամութիւն՝ որով յօդեալ եմք 'ի մի ։ Դուստր իմ, երթ 'ի հռչակաւոր քաղաքն Աթենասայ ստոյգ աղերսարկուաց, հարկ իսկ է ցանց վարել ըստ բաղդին „ ։

Անտիգոնէ արտօսրաթոր աչօք փարեալ զծնկօք արքային՝ հազիւ լսէր զյետին բանս նորա. և ընդ տխուր բախտ հարազատացն իւրոց խոկայր. և ոչ այնքան փոյթ էր նմա վասն անձինն վշտաց և ցաւոց՝ որչափ ընդ աղէտս որ հանդերձեալն էին հասանել 'ի վերայ նոցա. վասն որոյ և զհայրենական անիծիցն զչարագուշակ արգասիս կամէր 'ի բաց մերժել 'ի նոցանէ ։ "Հա՜յր իմ, աղաղակեաց նա, յառաջ քան զմեկնել քո յաշխարհէ ներեա՛ եղբարց իմոց. խնուն դիք զլսելիս 'ի լուր ըղձիցդ բարութեան և սիրոյ՝ եթէ ոչ վասն ամենեցուն առհասարակ զբարութիւն առ 'ի նոցանէ պաղատեսցիս ։ Ո՛հ ներեա՛ եղբարց իմոց, զի թեթևասցին առ յինէն ծանրութիւնք աղետիցս „ ։

"Դուստր իմ, կրկնեաց Եդիպոս, ընդէ՞ր է քեզ այսպէս խօսիլ. ոգիդ ազնիւ Անտիգոնեայ, զի՞ կայ քո ընդ երջանկութիւն կամ ընդ թշուառութիւն. միթէ ո՞չ ունիցիս դու միշտ անդորրութիւն խղճի, գովութիւն 'ի մարդկանէ և սէր յաստուածոց ։ Երթ դուստր իմ, ծանեայ զմիտս քո. ոչ առ այլ ինչ բայց առ փրկութիւն որդւոցս իմոց տառապելոց խօսեցար զքէն ։ Աւա՜ղ, զի առ նոսա միայն մնայ քեզ այսուհետև նուիրել զկեանս քո. և աւուրք զոր կեցցես զգացմամբք այդուիկ լցեալ, կեանք քո համբուն 'ի նուէրս ծախեսցին անձնամատոյցս ։ Բայց ոչ. այդքան առաքինութիւնք մի՛ մնասցեն անվարձ, դուստր իմ, հաւատա՛ բանից Եդիպոսի որ 'ի մահ մատչի ։ Ողջամբ մնա՛ „ ։

Մեկնեցաւ Անտիգոնէ արտասուօք. և ահա վաղ ընդ փոյթ հնչէ 'ի լսելիս նորա ձայն իմն ահաւոր ։ Տակաւ նուաղէր տիւն, և միայն դոյզն ճաճանչք երկայնաձիգք թափ անցանէին ընդ խարին մթութիւնն ։ Թուէր իմն եթէ սարաւանդակք Պառնասեայ և սարք Եղիկոնի բոցս հատանիցեն ։ Հեղեղատն հովտին արձակէր հանդոյն իմն ձայնից ողբոց Եդիպոսի ։ Յանկարծ լսելի լինի հեռուստ դղրդիւն կառաց գլորելոց 'ի բարձուէ լերին, որ գահավէժ խորտակիցի ։ Ի խռիւմս անդնդախորս յետս դառնայ Անտիգոնէ՝ և խռովայոյզ սրտիւ նշմարէ 'ի մէջ երկուց կայծակաց բորբոքելոց զհեգ արքային Թեբայ. երեսք նորա ծածկեալք 'ի

քօղ երկայն․ 'ի միում ձեռին զսուսեր զօհին կալեալ, և 'ի միւսումն անդ ըղխառնարանն արինալից։ Այս շուրջ պատեալ ունէր զեղկելի Թագաւորն, յորոյ ճառագայթիցն շլանային աչկունք կուսին․ այլ յետ սակաւուց չիջանէր։

Եւ յորժամ այն աղջամուղջ ծածկեաց յաչայն զդէմն հօրն, և 'ի խորհրդաւոր խաւարէ հնչեաց բարբառս յետին․ “Եղուկ եղուկ, օղջամբ մընամ դուստր իմ„, խկոյն ցոլացաւ և արեգակն։ Զահի հարեալ մերձենայ Անտիգոնէ, այլ գգենեալն միայն գտանէ զգաւանն, և ոչ ինչ այլ․ չգոյր ինչ 'ի նշխարաց Եդիպոսի։ Այսպէս ահա անհետացաւ յերկրէ որդին Լայոսի․ շանթակէզ արդեօք ծախեցաւ, արդեօք յանդունդս ընկլուզաւ, եթէ կենդանւոյն վերացաւ յՈլիմպոս․ խորհուրդք են զոր ծածկեցին 'ի մահացուաց դիք։

Ազնուագութ դուստրն Եդիպոսի մնաց մենաւոր, մերթ հիանայր և մերթ վշտանայր․ զերիս աւուրս խնդրեաց յայսկոյս և յայն զմարմին հօրն առ ձօնել նմա զշուք դիահանութեան։ Դեռ ևս բոցավառ ծխէին կաղնիքն․ և ինքն զարհուրագին անցանէր ընդ վայրս սըրբեալս 'ի դատաստանաց աստուածոց։ Հուսկ յետոյ վաստակաբեկ լեալ գնաց ապաստան անկանել յաղքատին հիւղ հովուի ուրումն ծերոյ, ակն կալեալ պատեհ ժամու լնուլ զվերջին կամս հօրն և երթալ յաղքունիս Թեսէոսի։

ՊԱԼԼԱՆՇ

ԹԱՐԳՄ․ ՍՐԱՊԻՈՆ ԹՂԼԵԱՆ

Աշ․ Ռափ․ վարժ․

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Բիզա։

Միջին Իտալիոյ մէջ՝ իր նախնի հասարակապետութեամբ ու շէնքերովը անուանի Բիզա քաղաքը՝ ատեն մը Եւրոպիոյ տասուերկու ծաղկեալ քաղաքաց մէկն էր։ Ստրաբոն կ'աւանդէ թէ աս քաղաքս հիմնեցին Տրոյիոյ պատերազմէն ետ դարձող Յոյնք։ Ատեն անցնելէն ետքը Հռովմայեցւոց իշխանութեան տակն իյնելով, Ագրիանոս ու Անտոնինոս տաճարներով, թէատրոններով և յաղթական կամարներով զարդարեցին քաղաքը։ Երբոր Հռովմայեցւոց տէրութիւնը կործանեցաւ, ինչպէս նոյն մեծատարած իշխանութեան այլ և այլ գաւառները՝ ասանկ ալ Բիզա բարբարոսաց ձեռքն անցաւ, Քրիստոսի Ե դարուն․ իրենցմէ վերջն ալ Լանգոպարտացւոց։

Սակայն ժամանակ անցնելէն վերջը ազգութեան ոգին բոլոր Իտալիոյ թերակղզւոյն մէջ վառուելով՝ Բիզացիք ալ ոտք ելան, և օտարաց իշխանութէ լուծը թօթափելով՝ մասնաւոր հասարակապետութիւն կանգնեցին․ որով Վենետիկ և Ամալֆի քաղաքաց նախանձորդք երևնալով՝ Իտալիոյ պատմութեանց մէջ նշանաւոր եղան իրենց գործքերովը։ Քրիստոսի 1000 թուականին՝ Բիզայի հասարակապետութիւնը հարուստ, մեծարոյ և տիեզերական էր։ Սարակինոսք՝ չկրնալով անոր նաւական զօրութեանը դէմ դնել, ստիպուեցան Իտալիայէն քաշուիլ։ Այս դէպքէն քիչ ատեն ետքը՝ Բիզացիք Սարտենիա կղզւոյն տիրեցին, և 1029ին Կարթագինէ իրենց անձնատուր եղաւ, ու տեղւոյն թագաւորը գերի։ Նաև մեծամեծ գործոց ձեռք զարկին երբոր խաչակիրք Արևելք սկսան արշաւել․ որով լիբէական ափանց վրայ այլ և այլ հարկաւոր տեղեր գրաւեցին, և շատ դէպքերու մէջ տեղացւոց ամբարտաւանութիւնը նուաճեցին։ Բալէարեան ու Եւոլեան կղզիք ալ իրենց իշխանութիւնը ճանչցան։ Վաճառք ամէն կողմանէ Բիզայի նաւահանգստին մէջ կը թափէին․ այն նաւահանգստին՝ որուն այսօրուան օրս հազիւ թէ հետքը կրնաս նշմարել։ Միջերկրական ծովուն մէջ՝ իտալական առաջին շահավաճառն էր Բիզա․ ինչուան Բիւզանդիոյ ոսկին առատաբար իր գանձարանին մէջ կը լեցուէր․ ուստի երբոր Փրեդերիկոս